ՏԵՂԵԿԱԳԻՐ ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ
ИЗВЕСТИЯ АКАДЕМИИ НАУК АРМЯНСКОЙ ССР

Հասարակական գիտություններ 1946, № 7 *Общественные науки*

ԳՐԱԽՈՍՈՒԹՅՈՒՆ

Х. Момджян—Сыны армянского народа в боях за Советскую Родину. Армгиз, Ереван, 1945, стр. 100.

Գերմանա-ֆաշիստական իմպերիալիզմի դեմ մղված Հայրենական Մեծ պատերազմում իր ամբողջ կարողությամբ դրսևորվեց հաղթող սովետական ժողովրդի անխորտակելի զորությունը, նրա անհուն սերն ու նվիրվածությունը իր սիրասուն Հայրենիքին և բոլշևիկյան պարտիային։ Հանճարեղ զորավար մեծ Ստալինի առաջնորդությամբ շահած հոյակապ հաղթանակը, հերոսական ռուս ժողովրդի հետ մեկտեղ, դարբնեցին Սովետական Միության բոլոր ժողովուրդները՝ փրկելով աշխարհի քաղաքակիրթ ազգերը ֆաշիստական ստրկացման սպառնալիքից։

Մայր-հայրենիքի վրա կախված վտանգի ահեղաշունչ օրերին Մեծ առաջնորդի առաջին իսկ կանչով ոտքի ելավ և ողջ ազատասեր հայ ժողովուրդը՝ մարտնչելու հանուն իր պատվի ու դարերից ի վեր բաղձալի ազատության, հանուն Սովետական իշխանության վեհ գաղափարի, որը «Հայաստանին բերեց խաղաղության և ազգային վերածնության հնարավորություն» (Ի. Ստալին)։

Լայնատարած ռազմաճակատի բոլոր հատվածներում, պաշտպանողական դաժան մարտերի տագնապալի օրերից մինչև տենչալի հաղթանակը, անօրինակ մարտնչում էին բազմահազար հայ քաջորդիներ՝ փառքի ու հերոսության սքանչելի դրվագներ ստեղծելով հայ ժողովրդի՝ պայքարով լի պատմության ալեզարդ էջերում։

Մինչև օրս, մեր մամուլի էջերում հրապարակված հոդվածներն ու գրական ակնարկները միայն որոշ չափով և մասնակի դեպքերով են լուսաբանել հայ ժողովրդի հերոսական պայքարը Հայրենական Մեծ պատերազմում։ Այդ տեսակետից առաջին շնորհալի գործը պետք է համարել Գիտությունների Ակադեմիայի Պատմության Ինստիտուտի ավագ գիտ. աշխատակից Խ. Մոմջյանի՝ „Сыны армянского народа в боях за Советскую Родину“ *աշխատությունը, որը, չնայած իր սուղ ծավալին, այնուամենայնիվ ամփոփ կերպով ընդգրկում է Հայրենական պատերազմի ճակատներում առավել աչքի ընկած ու փառաբանված հայ ռազմիկների հերոսական գործերը։ Հեղինակին, անշուշտ, հաջողվել է ցայտուն գծերով ու հագեցված փաստերով գրքի էջերում վերարտադրել մեր ժողովրդի անձնուրաց պայքարը հիտլերյան հորդաների դեմ, սկսած գերմանացիների ուխտադրուժ հարձակման առաջին օրից մինչև սրբազան պատերազմի հաղթական ավարտը։*

Գրքի առաջին էջերը հագեցված են բուռն զայրույթով համակված ողջ հայ ժողովրդի անհողդողդ կամքն ու վառ հայրենասիրությունը արտահայ-

տող պերճախոս փաստերով։ Հիտլերյան Գերմանիայի կողմից սկսած ավազակային հարձակման լուրը ցնցեց ստեղծագործ, խաղաղ կյանքով ապրող, Հայաստանի աշխատավորությանը։ Ամենուրեք գումարված բազմամարդ միտինգներում բանվորները, ծառայողները, կոլխոզնիկներն ու ինտելիգենցիան երդվում էին իրենց մեծ առաջնորդին՝ մինչև վերջն անկուն մնալ Սովետական հայրենիքի դոյության համար ծավալված պայքարում։ Հազարավոր հայրենասերներ հայտնում էին իրենց պատրաստակամությունը անհապաղ մեկնել ռազմաճակատ՝ արյան գնով պաշտպանելու սովետական պետության պատիվն ու արդար իրավունքները։

Այնուհետև, ընթերցողին պատկերվում են անհամար փորձություններով լի, պաշտպանողական դաժան մարտերի հետ զուգակցված, Կարմիր Բանակի ստրատեգիական նահանջի ծանր ամիսները։ Արևմտյան մարզերում մոլեգնում էր գերմանա-ֆաշիստական բանակը, ահավոր կորուստների գնով խրցկվում մեր երկրի կենսական շրջանները։ Սովետական ռազմիկները բացառիկ արիությամբ դիմադրում էին հիտլերյան հորդաներին, հավատարմորեն պաշտպանելով իրենց այնքան նվիրական քաղաքներն ու գյուղերը։

Տագնապալի այդ օրերին ծնունդ առան անգրանիկ խիզախները։ Շուտով ողջ Սովետական Միությանը հայտնի դարձան օդաչու Պատրիկ Գազազյանի, քաղղեկ Արգամ Պետրոսյանի, մայոր Ապրեսյանի և բազմաթիվ հայ ռազմիկների պանծալի անունները։ Արդեն պատերազմը սկսվելուց երկու ամիս անց «Պրավդա»-ն իր «Հայ ժողովուրդը Սովետական Միության ազատագրական պատերազմի մարտական մասնակիցն է» խորագրով խմբագրականում գրում էր.

«Հայ ժողովուրդը հաստատապես իր մարտական տեղն է գրավել իրենց անկախության և ազատության համար Սովետական Միության բոլոր ժողովուրդների մղած ընդհանուր պայքարում... Հայ ժողովուրդը, ինչպես Սովետական Միության մյուս բոլոր ազատ ու իրավահավասար ժողովուրդները, առավել խորապես զգաց մեր երկրի վրա կախված վտանգն այն պատճառով, որ նա իր բազմադարյան պատմության մեջ քանիցս ենթարկվել է օտար բռնակալների հարձակումներին։ Նա գիտե, թե ինչ բան են կոտորածը, ավերը, սովը, բռնությունները։ Հայ ժողովուրդը չի մոռացել հայերի ֆիզիկական ոչնչացումը, որ կազմակերպել էր արյունռուշտ Հիտլերի նախորդ Վիլհելմ կայսրը առաջին իմպերիալիստական պատերազմի տարիներին։

Այդ պատճառով, երբ արյունալի հրդեհի պես բռնկեց պատերազմը, որ սկսել էլ մարդակեր Հիտլերը Սովետական Միության դեմ, ամբողջ հայ ժողովուրդը մի մարդու պես ոտքի կանգնեց հայրենիքը պաշտպանելու»[1]։

1941 թ. աշնանը թշնամին, վիթխարի կորուստների գնով, ընդհուպ մոտեցավ Մոսկվայի մերձակա մատույցներին։ Հիտլերի զորակայանը ճգնում էր նվաճել Մոսկվան, նոր աշխարհի և առաջավոր մարդկության լուսապսակ խորհրդանիշը։ «Բազմազգ սովետական ժողովուրդն ավելի սերտ համախմբվեց իր առաջնորդի շուրջը։ Միլիոնավոր սովետական մարդկանց գիտակցությունը համակված էր միևնույն մտքով՝ մեռնել, բայց չթողնել թշնամուն ոտնակոխել Մոսկվան»[2]։

---

[1] «Պրավդա», 25 օգոստ. 1941 թ.

[2] Х. Момджян-„Сыны армянского народа в боях за Советскую Родину", էջ 16.

Այդ նվիրական քաղաքի համար ծավալված հերոսամարտում ծնունդ առավ արդի ականավոր զորավար գեներալ Բաղրամյանի ռազմավարական կարկառուն տաղանդը։ Մոսկվայի մատույցներում փայլուն սխրագործություններով աչքի ընկան հրետանու գեներալներ Բարսեղովն ու Վեքիլյանը։ Այդտեղ իրենց մարտական մկրտությունն ստացան հայ գեներալներ Ս. Մարտիրոսյանը, Հ. Մարտիրոսյանը, Ի. Գասպարյանը և Ս. Գինոսյանը։ Մեր երկրին հայտնի դարձան մայոր Բալոյանը, մայոր Հ. Լաղարյանը, կոմերիտական Շադունցը և բազմաթիվ այլ հայ ռազմիկներ, որոնք Կարմիր Բանակի հետիոտնային զորագնդերի կազմում, արիաբար մասնակցեցին գերմանա-ֆաշիստական զորքերի լիակատար ջախջախմանը Մոսկվայի մատույցներում։

Այդ նույն ժամանակ, Մոսկվայից հյուսիս-արևմուտք, անօրինակ տոկունությամբ մարտնչում էր հերոսական Լենինգրադը՝ մեծ Հոկտեմբերի չքնաղ օրրանը։ Հեղինակը Լենինգրադի հայ պաշտպանների պատվավոր անվանաշարն ամենայն արժանավորությամբ բացում է խոշորագույն ռազմական տեսաբան, Նավատորմի ծովակալ Ի. Ս. Իսակովի փառապանծ անվամբ։ Եվ իրոք Կարմրադրոշ Բալթյան նավատորմի սերտ համագործակցությունը Լենինգրադի ռազմաճակատի զորքերին, անվեհեր ծովայինների հմտարձակ գործողությունները Ֆիննական ծոցի և Բալթիկայի կոմունիկացիաներում, Լենինգրադը «Մայր երկրի» հետ կապող միակ հաղորդակցության ջրային ուղու «Կյանքի ճանապարհի» ստեղծումը, որի շնորհիվ հերոս քաղաքը պահպանեց իր գոյությունը շրջափակման դժնդակ ամիսներին, այս ամենն անխզելիորեն կապված է Նավատորմի ծովակալ Իսակովի անվան հետ։

Լենինի քաղաքի պաշտպանության օրերին հռչակվեց Ստալինյան ավիացիայի լավագույն վարպետներից մեկի, Բալթիկայի վիրտուոզ օդաչու-գրոհիչ Նելսոն Ստեփանյանի համբավը։ Ուշագրավ է մեջբերել անվեհեր օդաչուի անձնական հաշիվը, որը հրամանատարության կողմից գրանցված է նրա պարգևատրման թերթիկում.

«Մարտական գործողությունների ընթացքում, 1941 թ. հունիսից մինչև 1944 թ. օգոստոսի 18-ը, Նելսոն Ստեփանյանը, Իլ-2 ինքնաթիռով կատարել է 239 հաջողակ թռիչք, որի ընթացքում ջրասույզ է արել մեկ ականակիր, 2 պահականավ, 2 տորպեդային կատեր, 5 փոխադրանավ 18 հազար տոննն ընդհանուր ջրածավալով։ Ստեփանյանը ոչնչացրել է հակառակորդի մինչև 5000 գինվոր ու սպա, 80 տանկ, 600 ավտոմեքենա, 140 հրանոթ, 130 գնդացրային կետ, երկաթուղային 40 վագոն և 1 շոգեքարշ։ Նա կործանել է 4 գետանցարան, առաջացրել է 80 պայթյուն և 70 հրդեհ, օդային մարտում ցած է գցել հակառակորդի Յու-88 տիպի երկու ինքնաթիռ և գետնի վրա ոչնչացրել տարբեր տիպի 25 ինքնաթիռ» (էջ 20)։

Այսու հասկանալի է, թե ինչու ՍՍՌՄ Գերագույն Սովետը, Լենինգրադի երկնակամարի տակ իր մարտական հաշիվն սկսած և այն փայլուն հաջողությամբ ավարտած Նելսոն Ստեփանյանին շնորհեց Սովետական Միության կրկնակի Հերոսի բարձր կոչում։

Լենինգրադի համար մղված մարտերում դոհվեց քաջարի գեներալ Բենիամին Գալստյանը։ Այդ կորստով խորապես ազդված, Նիկոլայ Տիխոնովը Գալստյանի պայծառ հիշատակին ձոնել է հետևյալ տողերը՝

«.... Գալստյանի անունը մենք կմտցնենք հերոսների՝ Լենինգրադի

պաշտպանների անջնջելի ցուցակը և կհիշենք նրան ընդմիշտ, որպես մեր մեծ քաղաքի սքանչելի հայրենասերի» (էջ 22)։

Հայրենիքն ամենայն արժանավորությամբ կհիշի Լենինգրադի հավատարիմ ասպիրանտ Գասպարյանին, որը 30 ժամ տևող անհավասար մարտից հետո, վերջին նռնակով պայթեցնում է իրեն՝ նողկալի գերության մեջ չընկնելու համար։

Լենինգրադի, ինչպես նաև Սովետական Միության ողջ կուլտուրական հասարակայնությունը կհիշի Հայկական ՍՍՌ Գիտությունների Ակադեմիայի պրեզիդենտ, Գետական էրմիտաժի դիրեկտոր ակադեմիկոս Հ. Ա. Օրբելուն, որը Լենինգրադի շրջափակման ծանր օրերին, հարհամարհելով վտանգը, պատանեկական ավյունով շրջում էր զորամասերն ու Բալթյան նավատորմի ռազմանավերը և իր բոցաշունչ խոսքով անդրդվելի հավատ ներշնչում գալիք հաղթանակի նկատմամբ։ Նա Լենինգրադից հեռացավ միայն այնժամ, երբ էրմիտաժի հարստությունները և գիտական կոլեկտիվն արդեն ապահով էին վտանգից» (էջ 26)։

Գրքի հաջորդ էջերն ընդգրկում են Կարմիր Բանակի 1941-1942 թ. թ. ձմռան պաշտպանողական համառ մարտերը, որ տարվում էին Ղրիմում և Կերչի թերակղզում։ Այդ օրերին կազմավորվեց գնդապետ Զաքյանի հրամանատարությամբ գործող առաջին հայ ազգային զինվորական միավորումը 390-րդ դիվիզիան, որը հայրենիքին պարգևեց անվեհեր հրամանատարներ՝ կոմիսար Թ. Շահինյանին, փոխգնդապետ Բ. Դանիելյանին, գնդապետ Ա. Բոյաջյանին, մայոր Գ. Ավալյանին։

Բազմաթիվ հայ ռազմիկների մեծ պատիվ վիճակվեց, ռուս ժողովրդի լավագույն զավակների հետ մեկտեղ, մասնակցել Սևաստոպոլի անմահ դյուցազնամարտում։ Այնտեղ վերստին հոչակվեց Գերագույն Գլխավոր Հրամանատարության Զորակայանի ներկայացուցիչ, նավատորմի ծովակալ Ի. Իսակովը՝ անգնահատելի ավանդ մտցնելով Սեվաստոպոլի հերոսական պաշտպանության կազմակերպման գործում։ Ռուսական փառքի քաղաքի համար իրենց դեռատի կյանքը Հայրենիքի զոհասեղանին նվիրաբերեցին քաջարի օդաչուներ՝ Վարդգես Վարդանյանը, Շահեն Աղեկյանը, բանաստեղծ Թաթուլ Հուրյանը...

Պատերազմի արհավիրքը մոլեգնում էր հինավուրց Կովկասում։ Օգտվելով Եվրոպայում երկրորդ ճակատի բացակայությունից, 1942 թ. ամռանը գերմանական հրամանատարությանը հաջողվեց ժողովել իր ողջ ազատ ռեզերվները և հարավում ուժերի մեծ ղերակշռություն ստեղծելով՝ հարվածն ուղղել դեպի Կովկաս ու Ստալինգրադ։

Միանգամայն ուղղամտորեն վերլուծելով Հայրենական պատերազմի պատմության մեջ առանձնահատուկ տեղ գրավող այդ ժամանակաշրջանի ռազմա քաղաքական իրադրությունը, հեղինակը հակիրճ, սակայն գունեղ օրինակներով վերհանում է Անդրկովկասի ժողովուրդների անդրդվելի կամքը և սովետական զորքերի տիտանական ուժը, որ վիթխարի պատնեշի պես ծառացան տևտոնական հորդաների դեմ-հանդիման՝ ամուր փակելով Կովկասի անառիկ դարպասները։

«Այն միտքը, որ թշնամին մոտեցել է, որ նա սպառնում է ավերիչ մոլուցքով ներխուժել Անդրկովկասի քաղաքներն ու գյուղերը և ամեն ինչ հիմնահատակ կործանել, ավելի սերտ համաձուլեց և մոբիլիզացրեց Ադր-

բեջանի, Վրաստանի ու Հայաստանի ժողովուրդներին, վճռականությամբ համակեց նրանց ռուս ժողովրդի հետ թև թևի տված ջախջախել ու ճզմել ֆաշիստական իժին Կովկասի նախալեռներում» (էջ 36)։

Նույնպիսի վճռականությամբ մարտնչում էին ռազմաճակատում Հայաստանի արիասիրտ զավակները։ Կովկասի համար մղվող ճակատամարտում իր փառավոր ուղին բացեց 89-րդ հայկական հրաձիգ դիվիզիան՝ հայ ժողովրդի փառքով օծված մարտական դրոշները Կովկասի նախալեռներից տանելով մինչև գահավիժված Բեռլին։ Կովկասում աչքի ընկան նաև մյուս հայկական միավորումը՝ 409-րդ դիվիզիան, որի կազմից ելան՝ բազմաթիվ մարտերում հռչակված, Սովետական Միության Հերոս «լեռնային արծիվ» Սամսոն Մկրտումյանը, Հակոբ Սարգսյանը, սակրավոր Մեսրոպ Ղազարյանը։

Կովկասի հայ պաշտպանները թեժ մարտերի տագնապալի պահին ամենայն օր զգում էին Հայաստանի ժողովրդի սերն ու օգնությունը, Հայաստանի Կ(բ)Պ ԿԿ-ի և մասնավորապես Ռազմական Խորհրդի անդամ Գ. Ա. Հարությունյանի հիշատակության արժանի օժանդակությունը ռազմաճակատում մարտնչող հայկական զորամասերին։

Ժամանակագրական տեսակետից Կովկասի պաշտպանությունը համընկավ Ստալինգրադի անմահ էպոպեին։ Զանգեզուրի բարձրագահ լեռներից, Սևանի ափերից ու Արաքսի հովտից բազմահազար հայ ռազմիկներ եկել էին Վոլգայի անսոսիկ ամրոցը, ռուս ժողովրդի հետ մեկտեղ մասնակցելու այն հոյակապ ճակատամարտին, որը հետագայում գերմանա-ֆաշիստական բանակի մայրամուտը հանդիսացավ։ Հերոսական քաղաքի պարիսպների տակ իրենց անմահացրին գեներալ-լեյտենանտներ Իվան Վեքիլյանը, Հայկ Թումանյանը, Սերգեյ Գալաջևը, գեներալ-մայոր Ասքանազ Կարապետյանը։ Այդ վիթխարի հերոսամարտում ծնունդ առան Սովետական Միության ապագա հերոսներ Ս. Բուռնազյանը, Մ. Բոստանջյանը, Ա. Պողոսյանը, Ղ. Մադոյանը, Ա. Հարությունյանը։

Ստալինի քաղաքի համար մղած հերոսամարտում փառապանծ մարտական ուղի է անցել Անդրկովկասի քաղաքացիական կուրսերի հողմերում ծնված, Կ. Ե. Վորոշիլովի անվան նախկին հայկական դիվիզիան, որը Ստալինգրադում ցուցաբերած աչքի ընկնող մարտական ծառայությունների համար արժանացել է Մեծ Ստալինի կրկնակի շնորհակալությանը և գվարդիական զորամասի պատվավոր կոչմանը։

Ստալինգրադի հայ պաշտպանների աննկուն պայքարը գրքի էջերում վերարտադրված է սեղմ, անառարկելի փաստերով։ Այստեղ հիշատակված են գվալդիայի գնդապետ Մ. Մադաթյանը, կապիտան Ա. Միրզոյանը, գվարդիականներ Ա. Գոչարյանը, Ա. Հակոբյանը, Ե. Ալիխանյանը, որոնց, բյուրավոր հերոսների հետ մեկտեղ, երկնեց ու կոփեց Ստալինգրադյան աշխարհահռչակ ճակատամարտը։

* * *

Հայրենական պատերազմի դարձակետում վիթխարի ժայռի պես կանգնած Ստալինգրադից ձգվեց Սովետական դորքերի փայլուն հաղթանակների և գերմանական բանակի ողբալի պարտությունների անդընդմեջ շղթան։ «Այսուհետև նախաձեռնությունն անցավ Կարմիր Բանակի և մեր դաշնակիցների ձեռքը։ Հակահիտլերյան ուժերը ան-

ցան վճռական հարձակման։ Պատերազմը մտավ իր զարգացման նոր փուլի մեջ» (էջ 47)։

Գրքի երկրորդ կեսը նվիրված է աննախընթաց թափով ծավալված հարձակողական մարտերին, որ մղվում էին անծայրածիր ռազմաճակատի բոլոր հատվածներում։ Այդ օրերին հայ ժողովուրդն իր սրտառուչ նամակն ուղղեց Հայրենիքի ազատության համար մարտնչող զավակներին։ Այնտեղ ասված է. «Հանուն սովետական հայրենիքի, հանուն Մայր-Հայաստանի, հանուն Ձեր Ստալինի, մի խնայեք ձեր կյանքը, մի խնայեք ձեր վերջին կաթիլ արյունը։ Հիշեք մեր ժողովրդի իմաստուն խոսքերը. «Զգիտակցված մահը՝ մահ է, գիտակցված մահը՝ անմահություն է» (էջ 48)։

Այդ պատմական նամակ-փաստաթուղթը հսկայական նշանակություն ունեցավ։ Հայաստանի կանչը հասավ ռազմաճակատում մարտնչող իր զավակներին, ոգեշնչեց նրանց նորանոր սխրագործություններին։ «Հեռավոր Հյուսիսից ու Լենինգրադից, Կարելո-Ֆիննական անտառներից և Ուկրաինայի անծայրածիր տափաստաններից, Ռժևի մոտից ու Կուրսկից, Հյուսիսային Կովկասից և Կուրանից, ռազմաճակատի բոլոր հատվածներից, հայկական զորամասերը, ստորաբաժանումները, առանձին հրամանատարներն ու մարտիկները հայտնում էին այն մասին, որ ժողովրդի պատգամը հասել է իրենց, որ նա կկատարվի» (էջ 50)։

«Մենք երդվում ենք մեր պատվով,—գրում էին այդ օրերին ապագա թամանցիները,—մեր զոհված ընկերների արյամբ, բարբարոս ֆաշիստների կողմից անարդված ու խոշտանգված մայրերի, քույրերի, մանուկների արցունքով ու արյամբ, որ վրիժառու կլինենք դահիճ հիտլերականների նկատմամբ» (էջ 50)։

Եվ իրոք, հայ ռազմիկները սրբությամբ կատարեցին հայրենիքի նվիրական պատգամը։ 1943 թ. ամառը երբ սովետական զորքերը, մի շարք վճռական հատվածներում փայլուն հաղթանակ շահելուց հետո, անցան գերմանա-ֆաշիստական հրոսակների մասսայական վոնդմանը մեր երկրից, հայ մարտիկները մեծ անձնվիրությամբ մասնակցեցին Կարմիր Բանակի այդ ազատագրական առաքելությանը։ Թամանի թերակղզին ազատագրելիս հաչակվեց գնդապետ (այժմ գեներալ-մայոր) Նվեր Սաֆարյանի հրամանատարությամբ գործող 89-րդ հայկական դիվիզիան, որն արժանացավ Մեծ Ստալինի շնորհակալությանը և «Թամանյան» կոչմանը։ Դիվիզիայից 2000 մարտիկներ պարգևատրվեցին շքանշաններով ու մեդալներով։ Հանուն հայրենիքի հերոսաբար զոհվեցին Հունտն Ավետիսյանը, Սուրեն Առաքելյանը և Ջահան Կարախանյանը։ Հավերժացնելով արիության այդ երևելի կերպարները, ՍՍՌՄ Գեռագույն Սովետի Նախագահությունը դրանց երեքին էլ շնորհեց Սովետական Միության Հերոսի կոչում։

Առավել հարուստ օրինակներով է հագեցված գրքի այն մասը, որն ընդգրկում է Ուկրաինայի և Ղրիմի ազատագրման համար մղվող մարտերը (էջ 67—81)։ Այստեղ հանդես են գալիս ստալինյան ռազմական արվեստում մեծ ընդունակություններ ցուցաբերած գեներալներ՝ Կիևի ազատագրման հերոս Ս. Մարտիրոսյանը, Մելիտոպոլի մարտերում փառաբանված Ա. Կարապետյանը, Սուվորովի առաջին աստիճանի շքանշանի ասպետ Գ. Տեր-Գասպարյանը։ Հռչակավոր Դնեպրյան գետանցի համար Սովետական Միության Հերոսի կոչման արժանացան քսան հայ ռազմիկներ, որոնց

պատվավոր անվանաշարքը բացեց գեներալ-մայոր Անդրանիկ Ղազարյանը։

Ուկրաինայի ժողովրդին հիշատակարժան ծառայություններ մատուցեց Ա. Ի. Միկոյանի անվան պարտիզանական ջոկատը, որ կազմված էր ֆաշիստական գերությունից փախած 250 հայ մարտիկներից։ Պարտիզանական միավորման հրամանատար, Սովետական Միության Հերոս գեներալ-մայոր Նաումովը այսպես է բնութագրում միկոյանցիներին. «Միկոյանի անվան ջոկատը նշանավոր է ոչ միայն նրանով, որ նա ուժգին հարվածում է գերմանացիներին, այլ և այն պատճառով, որ նա սովետական հայրենիքի համար Ուկրաինայում մարտնչող միակ ազգային պարտիզանական ջոկատն է» (էջ 76)։

Ղրիմի և, հատկապես, Սևաստոպոլի, ազատագրման համար մղվող մարտերում վերստին նշանավորվեց 89-րդ Թամանյան դիվիզիան, որն արժանացավ «Կարմիր Դրոշ»-ի շքանշանի, իսկ երկու գնդերը «Սեբաստոպոլյան» կոչման։ Ղրիմի մարտերում դիվիզիան Հայրենիքին պարգևեց Սովետական միության հինգ նոր հերոսներ՝ Ա. Հարությունյանին, Ս. Բաղդասարյանին, Հ. Մկրտչյանին, Վ. Ռոստամյանի՛ և Ֆ. Ֆաչատրյանին։

Հայ ռազմիկները մեծ մասնակցություն ունեցան նաև Բելոռուսիայի և Մերձբալթիկյանի ազատագրմանը գերմանական զավթիչներից։ Այդ նշանակալից մարտերն անխզելիորեն կապված են Սովետական Միության Հերոս, բանակի գեներալ Հ. Ֆ. Բաղրամյանի անվան հետ։ Նրա ղեկավարած զորքերի փայլուն հաղթանակը Նեվելից հարավ և Գորոդոկի տակ, Շաուլայի հռչակավոր օպերացիան և, վերջապես, գերմանական տասնյակ դիվիզիաները հուժկու աքցանի մեջ առնելով՝ նրանց բալթիկ ծովին ընդհուպ սեղմումը, որի հետևանքով Մերձբալթիկան կտրվեց Արևելյան Պրուսիայից, այդ ամենը վկայում են տաղանդավոր զորավար Բաղրամյանի համաժողովրդական փառքը, որն ամենայն արժանավորությամբ նա վայելում է մեր երկրում։ Բելոռուսիայի ազատագրման համար մարտնչել են գեներալներ Բ. Առուշանյանը, Ս. Գինոսյանը, Ի. Գասպարյանը, Հ. Հախնազարյանը, Հ. Բաբաջանյանը, Սովետական Միության Հերոս Ղ. Ավագյանը, անվախ օդաչու Ա. Գասպարյանը, Զապաևի անվան պարտիզանական ջոկատի հրամանատար Վ. Աղաջանյանը և բազմաթիվ հայ խիզախներ, որոնց երջանկավետ բախտ վիճակվեց թշնամուն մեր սրբազան հողից լիովին վռնդելուց հետո, մասնակցել Կարմիր Բանակի պատմական արշավին՝ արդեն գերմանական տերիտորիայում։

Սովետական Գերագույն Գլխավոր Հրամանատարության կամքով եզրափակիչ, կատաղի մարտերը փոխադրվեցին Բեռլինի նախամուտքը։

Գրքի վերջին էջերում հեղինակն արդարացիորեն արտահայտում է այն անզուսպ պաթոսն ու տիտանական ուժը, որ հաժակել էր վրիժառու Սովետական զորքերին՝ Բեռլինի համար մղած հերոսամարտում։ Կարմիր Բանակի հաղթական զորագնդերի կազմում արշավում էին և հայ ռազմիկները՝ օր առաջ բռնակալ քաղաքը խորտակելու։

Հայ ժողովուրդն անսահման գոհունակությամբ լսեց Բեռլինի գրավման առթիվ, ի լուր աշխարհի ազդարարած, Մեծ առաջնորդի պատմական հրամանը, ուր առավել աչքի ընկած զորամասերի շարքում նշված էր նաև գեներալ-մայոր Նվեր Սաֆարյանի հրամանատարությամբ գործող 89-րդ եռակի շքանշանակիր Թամանյան դիվիզիան, ինչպես և անվանի հայ գենե-

բալներ Ս. Կարապետյանի, Ի. Գասպարյանի և Հ. Իսրաելյանի զեկավարած զորքերը։

Սովետական Միության Հերոսների պանծալի կաճառն ավելացավ նոր հայ խիզախներով։ Բեռլինի գրավման համար փառաբանվեցին բյուրավոր հայ քաջորդիներ, որոնք իրենց համեստ, սակայն հավետ անմոռաց ավանդը մտցրին այն մեծ հերոսամարտին, որը փայլուն հաղթությամբ պսակեց Սովետական ժողովրդի մղած Հայրենական Մեծ պատերազմը։

* * *

«Հայ ժողովրդի զավակները Սովետական Հայրենիքի համար մղած մարտերում» աշխատության հրապարակումն, անտարակույս, չափազանց խրախուսելի քայլ է, որ սիրով ձեռնարկել է հեղինակը։ Գրքի ռուսերեն լեզվով հրատարակումը հնարավորություն կտա Սովետական Միության ժողովուրդներին, թերես ոչ լրիվ, սակայն ամփոփ պատկերացում ունենալ Հայրենական պատերազմի օրերին հայ ժողովրդի անձնուրաց պայքարի մասին։ Հեղինակն իր գրքում բարեխղճորեն օգտագործել է Գիտությունների Ակադեմիայի Պատմության Ինստիտուտին կից Հայրենական Մեծ Պատերազմի Պատմության Կաբինետի արխիվում գտնվող արժեքավոր նյութերն ու փաստաթղթերը, ինչպես նաև Ինստիտուտի կողմից մոտ ժամանակներս հրապարակվելիք «Հայ ժողովուրդը Հայրենական Մեծ պատերազմի մարտական մասնակիցն է» ժողովածուի նյութերը։ Բացի այդ, գրքում զետեղված են մի շարք ուշագրավ տեղեկություններ քաղված կենտրոնական, տեղական և ռազմաճակատային մամուլի էջերից։

Հարուստ լեզուն, գրվածքի գեղեցիկ գրական ուժն ու պատկերավոր, առանց ավելորդությունների մեջ բերած օրինակները գիրքը դարձնում են հետաքրքիր և դյուրընթեռնելի։

Դժբախտաբար աշխատության սեղմ ծավալը հնարավորություն չի տվել հեղինակին լիովին արտացոլել հայ ժողովրդի հերոսական պայքարի դեռևս չլուսաբանված շատ դրվագներ։ Գրքի էջերից դուրս են մնացել Հայրենական պատերազմի ռազմաճակատներում փառաբանված մի շարք երևելի դեմքեր, ինչպես նաև պատերազմի տարիներին Հայաստանի աշխատավորության անձնվեր գործերն արտահայտող բազմաթիվ օրինակներ։

Ձենք կասկածում, որ նորագույն շրջանի պատմությամբ զբաղվող մեր մասնագետները ամենայն սիրով և ուշիմությամբ ձեռնամուխ կլինեն այդ պատվարժան գործին և իրենց գիտական աշխատություններում կվերարտադրեն հայ ժողովրդի զավակների սքանչելի կերպարը, որ մշտնջենական փառքով դրոշմվեց Հայրենական Մեծ պատերազմի անմահ տարեգրության մեջ։

Գ. ՏԵՐ-ԳՐԻԳՈՐՅԱՆ